ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի եվ սպորտի նախարարություն

<<Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան>> հիմնադրամ

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Հովհաննես Շիրազի հայրեներգության ուսուցումը

Ուսուցչուհի՝ Կարապետյան Հայկանուշ

(Գյումրու թիվ 29 հիմնական դպրոց ՊՈԱԿ)

Գյումրի 2023

Բովանդակություն

Ներածություն. 1

ԳԼՈՒԽ Ա . Հովհ.Շիրազի հայրեներգության ուսուցումը. 3

1) Շիրազի հայրենապաշտությունը. 9

2) Մարդու կատարելիությանը հավատացող բանաստեղծը. 12

ԳԼՈՒԽ Բ. Շիրազի հայրենասիրական քառյակները (<<Հայրենապատում>>).....15

Գլուխ Գ.Արարատը Շիրազի պոեզիայում.....17

ԳԼՈՒԽ Դ. Շիրազի բողոքը, պայքարի կոչը.....21

1)Կորսված հայրենիքը վերադարձնելու ճանապարհները. 23

Եզրակացություն. 26

Օգտագործված գրականության ցանկ. 29

Ներածություն

Թեմայի արդիականությունը

Շիրազն իր ժողովրդի լինելիության, <<սպիտակ եղեռնից>> ազատվելու, ապրելու նախապայմանը ժողովրդականին, ազգայինին ապավինելու մեջ էր տեսնում: Այդ մասին են վկայում նրա հայրենասիրական նվագները, որոնց նպատակն է ժողովրդի մեջ վառ պահել սերը հայրենի հողի, ջրի, լեզվի հանդեպ, վառ պահել ժողովրդի պատմական հիշողությունը, կարոտը կորած հայրենի եզերքի հանդեպ՝ չկորցնելով հույսը, հավատը երբևէ վերագտնելու կորուսյալ հայրենիքը, վերահաստատելու պատմական արդարությունը:

Մարտահրավերներին դիմակայելը, ազգային նկարագիրը պահելն ու արժանապատիվ սերունդ ձևավորելը, ամուր պետության ստեղծելն ու պահպանելը անմիջականորեն կապված են աճող սերնդի կրթության և դաստիարակության հետ: Անհերքելի է այն փաստը, որ դաստիրակության գործում իր ուրույն տեղն ունի ազգային մշակույթը, մասնավորապես՝ գրականությունը: Գրական այս կամ այն երկի ազդեցությամբ ձևավորում ենք արժեհամակարգ, հոգեկերտվածք: Հայրենասիրությունը ձևավորում ենք նաև համապատասխան գրականության ուսուցմամբ: Եվ պատահական չէ, որ Քառասունչորսօրյա պատերազմի ժամանակ հայ զինվորը փայլեց իր հայրենասիրական ոգով:

Հայրենիքը իբրև բացարձակ արժեք ձևավորելու գործը յուրաքանչյուր ուսուցչիս առաքելությունն է:

Ուսումնասիրության նպատակը

Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և վերլուծել Հովհ.Շիրազի հայրենասիրական ստեղծագործությունները, ազատագրական պայքարի նկարագիրը բանաստեղծի երկերում, դրա միջոցով հայրենանվեր սերունդ ձևավորելու գործընթացն արդյունավետ դարձնել: Նաև հայրենիքի արժևորման և աշխարհացիր հայության համախմբման պատգամախոսություն՝ ազգային արբազան նպատակների արծարծումներով, անկախ պետականություն ունենալու երազանքով:

Խնդիրները

Նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝

1. ուսումնասիրել Շիրազի հայրենասիրական քնարը
2. դիտարկել և վերլուծել հազարամյա պատմության հերոսական էջերը ՝ իբրև հայրենիքի նկատմամբ նվիրվածության և սիրո աղբյուր
3. կարևորել գրականության դերը հայրենանվեր անհատի ձևավորման գործում
4. ներկայացնել ժամանակի գաղափարախոսությունը և Շիրազին ՝ իբրև տարբերվող, ըմբոստ անհատ
5. վերլուծել և մեկնաբանել Շիրազի պահանջատիրությունն ու արարատապաշտությունը։

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը

Հետազոտական աշխատանքը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, 4 գլխից, եզրակացությունից, կցված է օգտագործված գրականության ցանկը, օգտագործված են վերլուծական, համադրական, համեմատական մեթոդներ։

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի ընտրությունը, ներկայացվում է հարցի տեսական դրվածքը, ուղենշված են թեմայի արդիականությունը, ուսումնասիրության նպատակը, խնդիրները, հետազոտության նորույթը, հետազոտություն իրականացնելու մեթոդները։

Գլուխ Ա

Հովհ. Շիրազի հայրեներգության ուսուցումը

Հայրենասիրական քնարերգությունը Շիրազի ստեղծագործության մեջ ունի ընդգրկման լայն ոլորտ՝ ժողովրդի պատմական անցյալ, սփյուռքահայության ճակատագիր, պատմական հայրենիքի ազտագրման հույս, հայոց լեզվի պահպանում՝ որպես ազգային գոյության նախադրյալ, ժամանակների կապ ու հիշողությունների շղթա («Հայոց հրաշքը», «Մեսրոպ Մաշտոց», «Խոսք մեծախորհուրդ պատգամի», «Ո՞րն է, բաբո՛,մեր հայրենիք», «Հայ ժողովրդի երգը», «Կտակ», «Արարատին» , «Անի», «Հայոց դանթեականը» և շատ այլ բանաստեղծություններ ու պոեմներ)։

Հայրենասիրության բոցավառ ջահը նա անմար պահեց հատկապես այն տարիներին, երբ այդ տրամադրությունների համար ստեղծվել էին աննպաստ պայմաններ, երբ հալածանքների մթնոլորտում բոլորը գերադասում էին լռել։ Շիրազը չլռեց.նաև այստեղ է նրա սխրանքը, նաև այստեղից սկիզբ առավ նրա ժողովրդականությունը։ Շիրազի քնարի հայրենասիրական մոտիվը ամենից հարուստ է։ Հայրենիքի կերպարը ներկայացնելու համար բանաստեղծը դիմում է գեղարվեստական բազմազան եղանակների։ Դրանցից մեկը հայրենի բնության գույների խտացմամբ հայրենիքի էությունը բացահայտելու եղանակն է։ Հաճախ էլ ներկայացնում է որպես հայկական գետերի ու լեռների ճարտարապետական կոթողների ու բնաշխարհի, ժողովրդական երազների ու պատմության ամբողջություն։

Հայրենիքի կերպարը նկատելիս Շիրազը հաճախ դիմում է երկրի պատմաաշխարհագրական խորհրդանիշներին (Անի, Մասիս, Սևան, Զվարթնոց, Հրազդան...) ու նրա անցյալի դրվագներին։ Դրանցով նա արտահայտում է պատմական հայրենիքի կարոտը («Դեռ չեմ տեսել ծովը Վանա, չեմ տեսել սարն իմ Սիփանա...»), պանդուխտ հայերի վերադարձը («Ճամփաները բացվեցին, էլի գարուն է բացվում...»), հայկական կոտորածների ծանր վերհուշը(«Թափառում էի Գանգեսի ափին...»):(հ.6)

Շիրազի հայրենասիրական քնարի մեջ էականը Հայաստանի վերածնության թեման է։ Այս իմաստով բնորոշ է բուռն զգացմունքով գրված «Հայ ժողովրդի երգը»(1947թ.), որն ունի «Վերելք» ենթավերնագիրը։ Այո՛, վերելք, որովհետև միայն պարտություններով ու կորուստներով չի կարելի դաստիարակել ժողովրդին։ Բանաստեղծությունը ջահել հոգու, մաքուր զգացմունքների և անհաս բարձրունքներին հասնելու ձգտող անհատի ոգեղեն երգն է։ Անհատական զգացմունքների մեջ, սակայն, դրսևորվում են ժողովրդի՝ իր ճանապարհին հանդիպող խոչընդոտները հաղթահարելով միշտ վեր բարձրանալու, հավերժանալու ձգտումն ու կամքը։

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Հովհ.Շիրազը տագնապով էր հետևում ծավալվող իրադարձություններին և իր քնարով ձգտում էր լավատեսություն ներշնչել հայ զինվորներին։ Այդ տարիներին գրած բանաստեղծություններից մնայուն արժեք ունի «Էքսպրոմտը»՝ վեցտողանի մի ստեղծագործություն, որ իր հակիրճությամբ ավելին է ասում մեր ժողովրդի տոկունության, համառության ու հավերժության մասին, քան ծավալուն շատ գործեր։ Շիրազն իր այս ստեղծագործությունը բնորոշել է պոեմ, որովհետև «Էքսպրոմտ»-ի վեց տողերն ունեն պոեմի խտացում։

Օրինակելի դասի պլան

Դասի թեման՝ Հովհ.Շիրազի «Հայ ժողովրդի երգը» բանաստեղծությունը

Դասի նպատակը-

- սերմանել հայրենասիրություն
- ձևավորել անհատական և մշակութային արժեհամակարգ
- աշակերտները ձեռք կբերեն քնարական հերոսին բնութագրելու, նրա արարքների հոգեբանական շարժառիթները մեկնաբանելու կարողություններ և հմտություններ
- կարժևորեն հայ ժողովրդի՝կյանքի դժվարությունները հաղթահարելու մեծ կամքը, վեր ձգտելու գաղափարը

Դասի վերջնարդյունքները-

- ներկայացնել բանաստեղծության հիմնական գաղափարը
- քննարկել, հայտնել դիրքորոշում բանաստեղծության առանցքային հարցերի շուրջ
- ներկայացնել բանաստեղծության արդիականությունը
- ստեղծել շարադրանք

Դասի խնդիրները-

- լուռ և բարձաձայն ընթերցանություն
- բովանդակության վերարտադրություն
- բնութագրական աշխատանք
- գրառումներ կատարելու փորձ
- լեզվական կարողունակության և գրագիտության բարձրացում
- սովորել սովորելու կարողունակության ձևավորում
- համցանցից գտնել նյութեր հայ ժողովրդի մասին,գտնել և լսել երգը

Ուսուցման մեթոդներ և հնարներ- խթանող հարցեր,չորս բանալի, մեկ կողպեք, կարճ դասախոսություն, հարցերի քարտարան

Դասի ընթացքը-ընթերցում եմ Մորիս Փոցխիշվիլիի կարծիքը Շիրազի մասին,կարծիքների փոխանակումից հետո ընթերցում եմ բանաստեղծությունը։Գրատախտակին գրվում են բանաստեղծության հետևյալ տողերը,սովորողներին հարցնում,թե ի՞նչ են հասկանում այս տողերը կարդալիս (Բախտս աստղերն են վեր պահել։ Չեմ նկատում քարեր ճամփիս։ Շանթն է բեկվում ճակտիս վրա։ Ինձ ելնելու քարեր կան դեռ։);

Հարցերով բացահայտվում են սովորողների տրամաբանական մտածողությունը։

Չորս բանալի և մեկ կողպեք մեթոդով աշխատանքը կատարել զույգերով կամ խմբով։ դասարանը բաժանվում է խմբերի, հանձնարարվում է բանաստեղծության

յուրաքանչյուր տնից ընտրել մեկական առանցքային բանալի բառ կամ բառակապակցություն ու գրել բանալիների վրա։









«Հեղինակը հայ ժողովրդին ներշնչում է նոր խիզախումների, իսկ դրա համար պետք է անկոտրում պահել հայի ոգին, հաղթահարել բոլոր դժվարությունները՝ քարերն ու սարերը, ահերն ու մահերը, դարերն ու գահերը, երբեքչտրվել պարտվողական հոգեբանության»:

Կատարել մտքերի փոխանակում, քննարկում։

Դասարանը բաժանել 5 խմբի, յուրաքանչյուրին տալ քարտերի վրա գրած հետևյալ հարցերը.

I խումբ - մեկնաբանել ձեզ դուր եկած տունը և պատճառաբանել՝ ինչու՞։

II խումբ - նկարագրել բանաստեղծության քնարական հերոսներին։

III խումբ-բացահայտել նոր սովորած բառերի իմաստը և դրանցով կազմել նախադասություններ։

IV խումբ - դուրս գրել մակդիրներն ու փոխաբերությունները։

V խումբ - կատարել բառային և բառարանային աշխատանք, բառերի բացատրություն, կազմել հոմանիշների շարքեր։

Ամփոփելով աշխատանքները՝ կատարվում է գնահատում, ապա՝ անդրադարձ։

Հանձնարարվում է բանաստեղծությունը սովորել անգիր, պատասխանել հետևյալ հարցին.ինչի՞ խորհրդանշաններ են քարերը, սարերը, դարերը, ահերն ու գահերը։

1) Շիրազի հայրենապաշտությունը

Ինչ խոսք, սերը հայրենիքի հանդեպ միշտ էլ հայ բանաստեղծի գերթեման է եղել,պարզապես Շիրազն այն զարգացրեց նորովի,չլինելով ականատեսը դարասկզբի արհավիրքների,բայց ապրելով դրանց ողբերգության մեջ։ Սա նոր հոգեբանություն էր մեր գրականության մեջ,հայրենասիրական ստեղծագործության նոր տեսակ,որը պարտադրված էր հայ գրողին,պարտադրված… սեփական ժողովրդի ողբերգական ճակատագրով։

Շիրազի քնարերգության գույները ի սկզբանե հարուստ էին, սակայն հայրենասիրական քնարը,որը հիմնականում ձևավորվեց պատերազմական տարիներից սկսած և իր բարձունքին հասավ 50-60-ական թվականներին, ամենգունագեղն ու հնչեղն էր։ Բանաստեղծի ստեղծագործական փուլերը միշտ չէ որ ժամանակային առումով հստակ են։ Հաճախ նույն շարքում նույն օրերին գրված

բանաստեղծությունները միանգամայն տարբեր աշխարհայացքի դրսևորումներ ունեն։

Կարծում եմ՝ այդ շերտերի հստակ ճշգրտմանը խանգարում է նաև այն, որ Շիրազն հազվադեպ է բանաստեղծությունների տակ նշել գրելու տարեթիվը։ Եվ, այնուամենայնիվ, 40-50-ական թվականների սկզբին Շիրազը հայտնագործում է հայոց իրական հայրենիքը իր ամբողջականության մեջ և ոչ թե առաջին աշխարհամարտից հետո քարտեզներում գծված սահմաններով։ Սա Շիրազի հայրենիերգրության աշխարհայացքային առաջին շերտն է։ Նրա պատանի հերոսի հռետորական հարցը ու ստացած պատասխանը այնս կասկած չեն թողնում ընթերցողի մեջ։

1940թ. –ին լույս է տեսնում «Երգ Հայաստանի» ժողովածուն, որի հայրենասիրական մի շարք գործերում նկատելի էին տագնապալի հուզումներ։ Պատերազմը ոտքի հանեց ստեղծագործական բոլոր ուժերին։ «Հայրենիքը վտանգի մեջ է» կոչն ուղղված էր մտքի ու զենքի բոլոր մարտիկներին։

Պատերազմի նախամուտքին Շիրազը հանդես եկավ հայրենասիրական փայլուն բանաստեղծություններով («Ո՞րն է, բաբո...», «Ո՞րն է, տղա...», «Արձան Աբովյանին...»)։

Մի շարք գործերում «Դավթի թոռները...», «Իմ Հայաստան...», «Հայ ժողովրդին..», «Արարատին...», «Երբ նայում եմ լեռնապարին...») Հովհ. Շիրազը խոսում է մեր դարավոր դժվարություններից, թափած արյունից ու հարության խինդից, վկայակոչում է զանազան դրվագներ ու դեմքեր։

Հայրենիքի ճակատագրի թեման բանաստեղծությունից բանաստեղծություն, պատկերից պատկեր ձեռք է բերում լեզվա-ոճական հարստություն, ստանում գեղարվեստական բազմազան հնչեղություն...

Շիրազի համար հայրենիք հասկացությունը վերացական չէ, այն սկսվում է հայրենի տան բակից, մանուշակից, սիրած աղջկանից ու մորից։ Նրա քնարերգության միջով անցնում է գաղափարական այն գիծը, ըստ որի՝ եթե այսքան գեղեցիկ են հայրենի հողն ու մարդը, լեզուն, ապա դրանց բախտի ու փրկության համար պայքարը դառնում է օդի չափ անհրաժեշտ ու բնական։

Ժողովրդի պատմական ճակատագրի մեջ Շիրազն առանձնահատուկ տեղ է վերապահում հայոց լեզվին։«Հայոց լեզվին», «Հայոց լեզուն», «Ուղերձ իղձերիս», «Խոսք մեծախորհուրդ պատգամի», «Պանդուխտ հայը» բանաստեղծություններում, «Քառյակներ լեզվապատումի» շարքում նա հնչեցնում է հայոց լեզվի հարատևության պատգամով իմաստավորվում ժողովրդի անվախճանականության խորհուրդը։

«Միակ զորքդ լեզուդ է սուրբ», «Հայոց լեզուն անպարտելի//Թուր –կայծակին է հայոց», «Մասիս պահեք հայոց լեզուն» ,-պատգամում է բանաստեղծը։ Նա նաև հնչեցնում է տագնապի ահազանգեր, որովհետև թե՛մայր հայրենիքում , թե՛սփյուռքում տեսնում է մայրենի լեզվից նկատվող նահանջ, ինչն արդեն նահանջ է հայրենիքից ու հայ ոգուց։ Դա նշանակում է ուծացում, ձուլում, վերացում։ (հ.5)

Շիրազն իր ապրած կյանքով իսկ դարձավ իր ժողովրդի երազների ու կարոտների, չբարձրաձայնված բողոքի ու պահանջի խիզախ մունետիկը՝ հաստատելով իր իսկ միտքն առ այն, որ «անմահ են բնաբուխ, ժողովրդաբուխ բանաստեղծները» («Մի փետուր իմ արծիվ կյանքից»)։

Շիրազը ոգով ազատ էր, հայ ժողովրդի ազգային իղձերի անվախ արտահայտիչը, Անդերսենյան հայտնի հեքիաթի իմաստուն մանուկը, մեծն Նժդեհի ցեղապահ գաղափարակիրը, ճշմարտության սրբազան լույսի աննահանջ ջահակիրը։ Ահա Գարեգին Նժդեհի խոսքը. «Ես տեսա ոգով ստրուկն ազատության մեջ և գարշեցի մարդուց։ Ես տեսա ոգով ազատն ստրկության մեջ և պաշտեցի մարդուն»։ (հ.11)

2) Մարդու կատարելությանը հավատացող բանաստեղծը

Շիրազի «Բիբլիական» պոեմում փառաբանվում է մարդը,հզոր,առողջ,գեղեցիկ,կատարյալ ու իմաստուն մարդը՝ի հեճուկս արյան,ջարդի ու ջարդարարների; Խոհափիլիսոփայական երկին զուգահեռ ձևավորվում է քաղաքացիական քնարը։ Ինչպես ժամանակի արվեստագետներից շատերը,Շիրազը ևս չէր կարող բացեիբաց ընդվզել անարդար և կեղծիքով պարուրված իրականության դեմ,բայց նաև չէր կարողանում լռել։Եվ, քանի որ, Ս. Աղաբաբյանի բնորոշմամբ,Շիրազը «ծնյալ դիվանագետ» էր,դիմում է փոխաբերական պատկերների և պայմանական սյուժեների։ 1943թվականին,երբ ահ ու սարսափի մեջ ապրում էին ոչ միայն հասարակ ժողովուրդը,այլև՝

մտավորականությունը,երբ մարդիկ վախենում էին նույնիսկ անձայն մտածել «ժողովուրդների առաջնորդի» դեմ ըմբոստանալու մասին,Շիրազը գրում է իր նշանավոր «Շղթայված մեղեդիներ» պոեմը։ Բանաստեղծի տաղերում սկսում է նշմարվել քաղաքացիական քնարերգության նոր անկեղծ,ըմբոստ,ընդվզող դրսևորումներ։Քաղաքացիական սյուժեի շրջանակում,բանաստեղծը զարգացնում փիլիսոփայություն մարդասիրության,բարության,չարության և այլ թեմաներով։ Դաժան են բնության օրենքները ուժեղը խժռում է թույլին,այդ դաժան օրենքները՝ ներխուժել են մարդկային փոխհարաբերությունների մեջ,մարդը ևս սկսել է կառավարվել բնազդներով։ Սակայն կենդանիներից ամենագազանը՝առյուծն անգամ կարող է հուզվել,լաց լինել,իր ձագի փրկության համար,անցնել ցանկացած վտանգի միջով, խախտել բնության օրենքները։ Եվ միանգամայն հասկանալի է,որ մարդը,ում Շիրազը համարում է բնության գլուխգործոցը,պատրաստ է ցանկացած քայլի հանուն իր զավակի։ Ե՛վ առյուծը,և՛ մարդը պայքարում են. մեկն իր ձագի համար,մյուսն իր որդիների ազատության համար,սակայն երկուսն էլ խաբվում են դարձյալ մարդու՝ բռնակալ արքայի կողմից։ Մի պահ թվում է,թե կարելի է թովել անգամ մարդ-գազանին ստիպելով նրան «արքայի գահից մարդու գահին իջնել»։ Սակայն դա լոկ ակնթարթ է,հասունանում է բանաստեղծի բուն ասելիքը,նույնանում են բանաստեղծն ու իր ստեղծած կերպարը և հնչում է ճշմարտությունը առան քողարկելու և պայմանականության։

Եվ մարդ անհատի,և՛ ողջ ազգերի ողբերգության հիմնական պատճառը և մեծագույն

չարիքը բռնությունն է,որի դեմ պայքարը դառնում է քնարերգության հիմնական խնդիրներից մեկը։ Երեխայի միամտությամբ Շիրազն հավատում է մարդկային խղճին։ Մարդու և ազգերի կատարելությանն հավատացող բանաստեղծը, ինչպես իր նախորդներից մի քանիսը,հայրենքի փրկությունը կապում է «աշխարհի խղճի»,արդարության հաղթանակի,արդար դիվանագիտության հետ։ Այդ ոգով ու բովանդակությամբ գրված բանաստեղծությունները գերակշիռ մասն են կազմում Շիրազի հայրեներգության մեջ։ Ճիշտ է,վախի ու կասկածի պես մի բան սողոսկում է բանաստեղծի հոգին,սակայն ազգերի խղճի հանդեպ գրեթե մանկական հավատը դուրս է մղում ոչ խաղաղ ճանապարհով կորսված հայրենքիը հետ վերադարձնելու ակնթարթային գայթակղությունը։

Այս հայրենանվեր տողերի համար բանաստեղծին մեղադրեցին ազգայնամոլության մեջ։ Անշուշտ ազգայնամոլության ու հայրենանվեր երգերի մեջ տաբերությունը ակնառու է,աներկբա։ Իր ստեղծագործության գլխավոր թեման հայրեներգությունն էր,որ դրսևորվում էր բանաստեղծի ներկապնակի բոլոր գույներով։ Սակայն իր պաշտած Մասիսը տեսնելու հույսը կորցրած պոետը պարզապես կտակում է.

Ինձ էլ բերեք այն սուրբ ձյունից՝ իմ հուշերի արցունքով,

Երբ կազատեք,լուրն ինձ բերեք ո՛չ թմբուկով,ո՛չ շուքով։

Քանզի սի՛րտս շատ է մաշվել Արարատի կարոտից,

Որ չմեռնեմ խնդությունից,լուրն ինձ բերեք...շշուկով։

Գլուխ Բ. Շիրազի հայրենասիրական քառյակները («Հայրենապատում»)

Հովհ.Շիրազի քառյակները, նրա ստեղծագործության օրգանական շարունակությունը հանդիսանալով, նոր որակ են ներկայացնում իրենցից։ Հեղինակը, որի սիրտը Ավ.Իսահակյանի խոսքերով ասված «երկինք է», չափազանց զգայուն էր իր ժողովրդի ներկայի և ապագայի նկատմամբ։

Հայրենիքի սիրուց քաղցր, բարձր մի սար դեռ չկա,

Արագածի նման մի սար, Մասիսի պես լեռ չկա,

Եվ այս հրաշք Մասիսն անգամ ձեռակերտն է իմ հայոց,

Բայց, ախ, հայոց վշտից ծանր ուրիշ մի լեռ՝ դեռ չկա...

Շիրազի քառյակները բանաստեղծական խոսքի անսահման հնարավորությունների մի գեղեցիկ ապացույց են։ Շիրազի քառյակների համար միշտ բնորոշը մնում է կենսախնդությունը։ Շիրազը երբեք աչք չի փակել կյանքի բազմաթիվ անարդարությունների առաջ և ոչ էլ մարդու ուղին հարթ ու պատրաստի ձևով է պատկերացնում։ Լինելով իր հարազատ ժողովրդի զավակը՝ նա անհունորեն

համակվել է իր ժողովրդի վշտերով։ Բայց և միաժամանակ նա տեսել է իր այնքան սիրած ժողովրդի ազատագրումն ու նրա կյանքի, մշակույթի զարգացումը։

Բախտ իմ, ո՞րն է հայոց աստղը՝աստղերի մեջ անհամար,

Միթե՞ իրավ այն փոքրիկն է, որ հազիվ է ժպտում հար,

Որ փշրվել հազար տեղով, բայց թե՝ լույս է տալիս դեռ՝

Ամենամեծ աստղերի մեջ, ամեն մեծին հավասար։

Հովհ.Շիրազի քառյակների ակունքները հին են և գալիս են ժողովրդի ստեղծագործական հանճարի մի զարմանալի հատկությունից։ Իր պատմության ամենամղձավանջային պայմաններում անգամ ժողովրդի լավատես ոգին չի խորտակվել։ Դառը ճակատագիրը նրան երբեք բիրտ ու դաժան չի դարձրել։ Հայ ժողովուրդը պայքարել է հանուն գեղեցիկի։ Նա գեղեցիկը կերտել է ոչ միայն սրով, այլև քնարով։ Ամենափիլիսոփայականը, ամենաաբարդը նա տվել է լիրիկական, հուզական, կենդանի ու պատկերավոր լեզվով։Հայրենները այդպիսի իմաստուն և հոգեթով ընդհանրացումների այն նմուշներն են, որոնք իրենց կատարելությունը գտել են Նահապետ Քուչակի զողտրիկ քառյակներում։

Մեծ պոետի քառյակներով կարծեք հաղորդակցում ենք դարեր առաջ ապրած հայ իմաստունը, խոհը և այսօրը՝միանգամայն։

Ես լոկ դարիս պոետը չեմ, որ կարոտն եմ հավերժի,

Թեկուզ, որպես անապատված սրտին՝ օդն եմ միրաժի

Ես իմ ազգին Մարս կտանեմ, մինչև Մասիս կհանեմ,

Քարավանված հայոց հույով ես ճամփորդն եմ հավերժի։

Շիրազի քառյակներում շնչում է ժողովուրդը։ Նրա քառյակների ուղին արահետ է դեպի Քուչակը։ Շիրազի քառյակների արմատները սնվում են ժողովրդից և հարստացնում ժողովրդին։

Ուր էլ պեղես հայոց հողը՝ տակից մի՛ գանգ դուրս կգա,

Ամեն քարի տակից՝ մի զանգ, որպես մի զանգ դուրս կգա,

Անլեզու էլ՝ կպահանջե հատուցումը հայ վշտի,

Մորթված հայոց արյան գինը արևից թանկ դուրս կգա։

Գլուխ Գ

Արարատը Շիրազի պոեզիայում

Շիրազը մեծ հռչակ ձեռք բերեց որպես Արարատի երգիչ, որպես հայ ժողովրդից խլված պատմական հայրենիքի ազատության բանաստեղծ: Շիրազի պոեզիայում մի առանձնահատուկ ոգեշնչվածությամբ է հառնում Արարատ լեռան սրբազան պատկերը: Նա նոր շնչով իմաստավորեց համայն հայության պատմական հայրենիքի խորհրդանշանը հանդիսացող Արարատի գոյությունը՝ Արարատի ազատագրումը և նրա շուրջ աշխարհասփյուռ ազգի համախումբը դարձնելով հիմնական ասելիք:

Արարատն ամեն ինչ է Շիրազի համար, իսկ գլխավորը՝ հայության միավորման, հայրենիքի անսասան ուժի, նաև՝ կորստյան ցավի ու կարոտի կսկիծի խորհրդանշան և ազգային հիշողության մարմնացում: Շիրազն այնքան է ոգեղենացնում Արարատը, որ բիբլիական լեռը դառնում է նվիրումի բարձրագույն աստիճան («Կուզեի նստել մի քարի վրա»):

Շիրազը Մասիսի թեման դարձնում է իր հայրենասիրական երգի առանցքը՝ստեղծելով կարոտի, վերհուշի և երազանքի խոհական քնարերգություն: «Արարատը մեզ համար սոսկ աշխարհագրական հասկացություն չէ,-գրում է Շիրազը,-մեր ազգի խտացված խորհրդանիշն է...»: (հ.5)

Հավերժության առջև Շիրազը հավերժություն է դնում և դրանով հավերժականության իմաստ հաղորդում հայրենիքին ու հայրենիքի ոգուն: Այս նվիրումի մեջ Շիրազն արձագանքում է իր մեծ նախորդին, ով ևս, Արարատի պատկերով գերված, գրում էր. «Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սարն եմ սիրում»: Չարենցյան հանգերով Շիրազն իր հերթին ասում էր. «Ես իմ Մասիս սարն եմ պաշտում»: Սա ոչ թե պարզ ազդեցություն է, այլ՝ հայրենասիրական ոգու, հայրենահիացումի ընդհանրություն:

Արարատի բազմաքանակ պատկերումների մեջ բանաստեղծը կերտում է իր պոեզիայի այն իմաստային միջուկը, ինչը խորհրդանշում է ազգային կյանքի էությունը:

«Կտակ», «Վերջին կտակ», «Արարատին», «Վերջին իղձս» բանաստեղծություններում Շիրազը նորոգում է իր խոսքի իմաստային շեշտերը և ասում է.

Նա է կարոտն իմ անսահման՝քարերն ի վեր, ի վեր Մասիս,

Թող ամպ ու շանթ գլխիս ոռնան սարերն ի վեր, ի վեր Մասիս,

Կտանեմ սիրտս վիրավոր որպես դրոշ Մասիսն ի վեր,

Թեկուզ մահով՝ կբարձրանամ դարերն ի վեր, ի վեր Մասիս։

Մասիս բարձրանալու վստահությունն այնքան ուժեղ էր բանաստեղծի հոգում, որ, վաղվա հույսը կենդանի պահելու նպատակով, գրում էր.

…Քանզի սի՛րտս շատ է մաշվել Արարատի կարոտից,

Որ չմեռնեմ խնդությունից՝ լուրն ինձ բերեք...շշուկով։

Արարատը սկիզբ է ու կեցության սահման, պայքարի բեմ է ու անմահության պատվանդան։ Բանաստեղծի պատգամը սա է. «Ինձ հոգեհանգիստ կատարեք միայն Մասիսի վրա», իսկ կտակը՝ սա. «Քեզ Մասիսն եմ կտակում, որ դու պահես

հավիտյան,//Որպես լեզուն մեր հայոց, որպես սյունը քո հոր տան...»։

Մասիսը Շիրազի պոեզիայում պատկերվում է իբրև հին ու նոր ուղիների խորհրդանշան։ Մի շարք քառյակներում կերպավորելով Մասիսը՝ բանաստեղծն ուղղակի պատասխանում է օրվա հրատապ հարցերին.

Ինչպե՞ս լռեմ, այսքան մոտ եմ Մասիսին,

Այսքան մոտ եմ, բայց կարոտ եմ Մասիսին,

Խաղաղությու՛ն, տես քեզ ինչքան եմ պաշտում,

Որ չեմ գոռում, թե վառոդ եմ...Մասիսին։

Հայրենի երկրի եղերական անցյալի պատկերը դրվում է մի կողմ, առաջ է գալիս արդիական, ամենակենսական հարցը. Բանաստեղծը քառյակի մեջ խտացնում է խաղաղության հանդեպ հայ մարդու դարավոր երազը։Բանաստեղծի կտակի

համաձայն՝ նրա սիրտը 2008 թվականին թաղվել է Արարատ լեռան գագաթի հավերժական ձյունների մեջ։

Գլուխ Դ

Շիրազի բողոքը, պայքարի կոչը

Ժողովրդի պատմության ճակատագրական պահը բեկվում է 1915թ.-ի Մեծ եղեռնի պատկերի մեջ: Եղեռնը Շիրազը համարում է հողագնդի «մեղքերի մեղքը»: Չարենցի «Դանթեական առասպելից» հետո, որն ազգային մղձավանջի ականատեսի դանթեականն էր, ստեղծվում է Շիրազի հայրեներգության հանրագումարը՝ «Հայոց դանթեական» պոեմը,որի ստեղծման և վերամշակումների վրա հեղինակն աշխատել է ավելի քան չորս տասնամյակ՝ 1941 թվականից մինչև իր կյանքի վերջը:8000 տողանոց այս ստեղծագործության յուրաքանչյուր տո՛ղ,յուրաքանչյուր հատվա՛ծ ողբ է 1915թ. եղեռնի անմեղ նահատակներին: Սակայն այն նաև ընդծված բողոք է՝ հզոր պետությունների,ազգերի և մարդկային անտարբերության դեմ,որոնց անկարեկից հայացքի ներքո կատարվեց դարի մեծագույն ողբերգությունը,ամենավայրագ ցեղասպանություններից մեկը:

Ողբի ու բողոքի,լացի և ցասումի տողերի հետ զուգահեռ՝Շիրազը շարունակում է բախել ազգերի ու մարդկության քնած խղճի դարպասները,որպեսզի առանց արյան,երկխոսության միջոցով լուծվի հայոց հարցը,և հայոց հայրենիքը վերադարձվի իր իրական տերերին:«...Վե՛ր կացեք,ո՛վ մեծ ու փոքր ազգ ու ցեղերի մեծ ու փոքր որդիք,գնանք ի մի ոգիացած ամեն սրտով՝աշխարհով մեկ արթնացնելու խիղճը... ետ վերցնելու հողերն իմ հայոց,Մասիսն իմ գերի»: Պոեմում քիչ են վրիժառության կոչերը,օրինակ՝

Ով դուք՝ վկաներ հավերժավրեժ հայոց եղեռնի,

Զարթնեք, որ պատժանքն այս անզույգ մեղքի կոկորդից բռնի,

Հատուցման արծիվն իր ժեռ վանդակից ի լույս սլանա...

Սակայն դրանք ավելի շատ «բարոյական վրեժխնդրության» պոռթկումներ են և ոչ թե՝զենքի ու արյան.

Մորթված արգանդից մանուկը կելնի՝

Չի թողնի իր հայ Վանա ծովն անտեր,

Իր Մասիս լեռներն անտեր չի թողնի,

Կհասնի հայ ցեղն իր հայ Մասիսին...

Եթե հաշվի առնենք, որ այս պոեմն իր ամբողջական տարբերակով Շիրազը հրատարակության է հանձնել բառացիորեն իր կյանքի վերջին և անգամ չի հասցրել տեսնել այն տպագիր վիճակում,ապա կարելի է ասել,որ պոեմը շիրազյան հայրենապատումի մեջ ամենաածավալունն է ու ամենաընդգրկունը, ամենագիտականը նրա քնարերգության մեջ:

Շիրազը գրում է մի շարք բանաստեղծություններ,որոնց զգալի մասը երկար տարիներ մնաց անտիպ,որովհետև ուներ ոչ միայն ընդգծված բողոքի,այլև ըմբոստացման և մարտակոչի շեշտ:

Ստեղծագործական առանցքն են կազմում պատմական թեմաներով գրված երգերը,որոնց մեջ հերոսական դրվագներին զուգահեռ հնչում են ազատության և անկախության կոչեր:

1) Կորսված հայրենիքը վերադարձնելու ճանապարհները

Անշուշտ,պատմական թեմաներին անդրադառնալը Շիրազի համար երբեք ինքնանպատակ չի եղել,սակայն այս դեպքում կորցրած հայրենիքի ազատագրման գաղափարին ծառայեցնելու միտումը ակնհայտ է:Հայրենիքի ազատագրումը բանաստեղծի համար գերխնդիր է,և այդ խնդրին լուծում տվողն ի վերջո ազգն է:

Շիրազն իր առաջ նոր խնդիր էր դրել. իր վերջնական ասելիքը որպես պատգամ հարազատ ժողովրդին հասցնելն էր: Իսկ այդ պատգամն արդեն չէր սահմանափակվում ըմբոստ պահանջատիրությամբ,նա հասել էր այն կարևորին,նրան,որի մասին տասնամյակներ առաջ արդեն Չարենցը գրել էր. «Ով հայ ժողովուրդ,քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»:

Շիրազի ստեղծագործություններում հնչում է արդար վրեժի և հատուցման պահանջը,կարծես թե տասնամյակները ոչինչ չեն փոխել դարասկզբի հայ

գրականության և ներկա հայ գրականության մեջ։Թվում է՝Շիրազը նույնպես ժամանակակիցն է հայոց մեծ եղեռնի ականատես բանաստեղծների,նրանց հետ «եղեգնյա գրչով երգում է վրեժ» և եղեգնյա գրչից դարձյալ «ելանում է բոց...»։

Շիրազի՝ երիտասարդներին խանդավառող, զգոնություն կոչող բանաստեղծությունը, որը վերնագրված է «Ողբ Ղարաբաղի»,որը կարծես և՛ ողբ է,և՛ ազատության պայքարի կոչ,հայրենիքը իր որդիների բազկի ուժով ազատագրելու և պաշտպանելու։ Ղարաբաղը կորսված հայրենիքի մի փոքրիկ մասնիկն է,հայոց արծիվն է,որին սպառնում է օտար ջրերի ճայ դառնալու վտանգը.

Քեզ կուլ կտան մուղամները,բառդ կառնեն,վա՜յ Ղարաբաղ…

Շիրազի «ողբը» այս անգամ մի հնոց է,ուր պետք է կռվի հայոց հատուցման սուրը՝զավթիչներից ետ խլելու կորսված հայրենիքը,որի խորհրդանիշն է Արցախը։ Այս բանաստեղծությունը գրված 1962թ. թեև անտիպ է,սակայն հայտնի է ժողովրդին։

Դու չես ջոկվել, խլել են քեզ, որ մոռանաս երգերն հայոց,

Զորերիդ պես խորացել են անդնդախոր վերքերն հայոց,

Ա՜խ, ե՞րբ պիտի լեռներիդ պես վեր բռունցքվեն ձեռներն հայոց,

Որ չթողնեն հայոց արծիվն օտար ծովին ճայ, Ղարաբա՛ղ...

Ցավոք,Շիրազը չտեսավ,թե 1988-ին՝իր վերջին պատգամին հարազատ՝ինչպես հազարավոր հայորդիների ձեռքերը վեր բռունցքվեցին՝սկիզբ դնելով հայոց նորօրյա ազատամարտին՝Արցախի ազատագրմանը։ Բայց նա մարգարեացել էր կանխատեսելով այդ պահը։ Կարծում եմ՝ բախտավոր էր Շիրազը,որ չտեսավ մեր օրերը,բայց հուսով եմ,որ նրա պատգամը կիրականացնի հայ ժողովուրդը։

«Բռունցքվելն է հավերժությունն Հայաստանի».-ահա շիրազյան պատգամն աշխարհացրիվ հայությանը։

Եզրակացություն

Շիրազը ծնվեց՝ իր մեջ ունենալով ողջ հայոց պատմությունը,նա գրականություն մտավ իբրև մի վիթխարի խենթ՝բոցավառված հայրենիքի սիրով,և սիրտը փոխանցեց սերունդներին։

Նա կանգնեց Արարատի ստորոտում, երազեց ճախրել, տեսնել կորսված հայրենին, «որ ունի բարձր երկինք,...,Արագածի գագաթից ձայնել Մասիսին. «Թե՝ հե՛յ,բաբո,բավ չէ մենակ,պանդուխտ մնաս ամպերու տակ...», հորջորջել «աշխարհի խիղճը», որ արթնանա։ Նա աշխարհին պատմեց հայի դանթեական ճանապարհի մասին,սգաց վիշտը Տիգրան Մեծի և գովերգեց «հայոց հրաշք» Մաշտոցին։

Շիրազը քննեց աշխարհը,Աստծո մեծագույն գլուխգործոցը՝մարդուն, որոնց մեջ առանձնացրեց իր տեսակը՝ հայը, եղավ երազկոտ, բայց ցեղակրոն հպարտությամբ կրեց իր գենը և պատգամեց սերունդներին։

Հ.Շիրազի հայրենասիրական ստեղծագործությունների հանգամանալից ուսումնասիրությունը հիմք է տալիս անելու նաև մի շարք այլ եզրակացություններ.

1. Ժողովրդի ազգային հոգեկերտվածքի և գեղարվեստական մտածողության խորքային երևույթների աղբյուրը՝ցեղի հազարամյա պատմությունն է։
2. Ազգային մշակույթն ու պատմությունը մշտապես եղել են այն անսպառ գանձարանը,որից մեծապես ոգեշնչվել է Շիրազը,և որի ուղղակի դրսևորումները նկատելի են գրողի ստեղծագործություններում։
3. Գրականությունն այն միջոցն է, որը հնարավորություն է տալիս գրողին մանևրելու,տարբեր ճանապարհներով ընթերցողին հասցնելու այն մտքերը,որոնք ուղղակիորեն արտահայտել կա՛մ ահնար է,կա՛մ վտանգավոր։
4. Շիրազի հայրեներգությունը հայրենասիրական ստեղծագործության նոր հոգեբանություն է բերում մեր գրականություն,հայրենասիրական ստեղծագործության նոր տեսակ,որ պարտադրված էր հայ գրողին սեփական ժողովրդի ողբերգական ճակատագրով;
5. Շիրազի ստեղծագործությունը հայ մշակույթի և գրականության ազգաբանական դիտարկման և ուսումնասիրության անսպառ աղբյուր է։

6. Բանաստեղծի պոեզիայում հայրենիքը առանցքային դեր ունի,և նրա ընկալումը առանձնահատուկ է։Բանաստեղծը հայտնագործում է հայոց իրական հայրենիքը իր ամբողջության մեջ։
7. «Արարատապաշտությունը» գերակա դիրք է զբաղեցնում Շիրազի հայրենապատումում;
8. Կորսված հայրենիքի բնապատկերները,կարոտի ցավը,բողոքի ու ընդվզման ալիք են դառնում բանաստեղծի հոգում և պահանջատիրության կոչ հնչեցնում։
9. Հովհ. Շիրազի ստեղծագործության մեջ ցայտուն արտահայտված է հայրենապաշտությունը,հայրենիքը ամենից և ամեն ինչից վեր դասելու ցանկությունը,հայրենիքն իբրև բացարձակ արժեք ընկալելու գերնպատակը։

Օգտագործված գրականության ցանկ

1. Աթաբեկյան Ս ., Հովհ.Շիրազի քնարերգությունը, Երևան, 1979։
2. Աղաբաբյան Ս., Հայ սովետական գրականություն /դասագիրք միջն. դպրոցի X դաս.համար/;Երևան, 1983։
3. Գասպարյան Դ., Գրականություն/7-րդ դաս./, Երևան, 2016։
4. Թամրազյան Հ., Գասպարյան Դ., Քալանթարյան Ժ., Հայ գրականություն/10-րդ դաս./Երևան,2000։
5. Շիրազ Հովհ., Երկեր, հատոր առաջին, Երևան, 1982։
6. Շիրազ Հովհ., Երկեր, հատոր երկրորդ, Երևան, 1982։
7. Շիրազ Հովհ.,Ընտիր երկեր/5 հատորով/,հ.I, Հայոց դանթեականը, Երևան, 1992
8. Շիրազ Հովհ.,Յոթնապատում, Երևան, 1977։
9. Հայոց լեզու և գրականություն/գիտամեթոդական ամսագիր/, 2012, թիվ 1։
10. Հայոց լեզու և գրականություն/գիտամեթոդական ամսագիր/, 2014, թիվ 2։
11. Մնացականյան Ե., Հայ գրականություն/հարցեր և պատասխաններ/, Երևան, 2011։